

Ձեռ. 299 (Սարգս. 215),
թղ. 3բ-7բ (պատմա-
աշխ) :

Ձեռ. 247 (Սարգս. 233),
թղ. 54ա-57ա (հատուած
մը մի-
աշխ) :

Կան նաև երկու նման պատմա-
աշխներ 512 (Սարգս. 202) ձեռ. ի մէջ, թղ. 140ա

(38) Էջմիածին. ձեռ. 907 (927), թ. 7. ձեռ. 920
(940), թ. 13. ձեռ. 925 (945), թ. 5. և ձեռ. 924 (944),
թ. 31, ճառ 17: Երոզսահեմ. ձեռ. 406, Գիրք
պահոց, թղ. 180 և ձեռ. 5ա 18 և ձեռ. 71, թ. 17: Բարի-
զ. ձեռ. 110 (մեքրո-ֆիլմ), թղ. 22բ-26բ, Վիեննա. ձեռ.
217 (մեքրո-ֆիլմ), թղ. 57բ-61ա, ուր կը գտնենք նաև
յիշատակարանը:

(39) Էջմիածին. ձեռ. 907 (927), թ. 8 և ձեռ. 924
(944), թ. 31, ճառ 18: Երոզսահեմ. ձեռ. 406, Գիրք
պահոց, թղ. 180 և ձեռ. 5ա 19 և ձեռ. 1001, թ. 13:
Մարտի. ձեռ. II, Միգրաթի, հիւպատոս Պարսից
1922-ին, թղ. 94-95. տես F. Macler, Notice de
manuscripts arméniens ou relatifs aux Arméniens
vus dans quelques bibliothèques de la péninsule
ibérique et du Sud-est de la France, dans Rev.
Etud. Arm., 2 (1922), էջ 244. տես նաև Ա. Ս. Սիւր-
մէնան (գործչիւրցան տեսնալ) Մայր ցուցակ հայերէն
ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներով, I, Pa-
ris, 1950. - Ամբողջ խօսակցութիւնը տպուած է «Կնիք
հաւատոյ» թ. մէջ, էջ 84-98 (նոյն թարգմանութիւնը):

և 1592 ձեռ. ի մէջ (Սարգս. 237), թղ.
23ա(38) :

19. — Հակաճառութիւն մը սուրբ
Բարսղի և Ապողինարի մէջ, ձեռ. 251,
թղ. 145ա-154ա: Այս հակաճառութիւնը
կը ներկայանայ խօսակցութեան ձևի տակ
և պատասխանները ամէնքն ալ նշանակ-
ուած են խօսակցին անունով. կը սկսի.
«Բարսեղ ասէ. Մարմին մարդկային ու-
նէ՞ր քրիստոս թէ ոչ»: Այս սկզբնաւորու-
թիւնը և վերջաւորութիւնը կը համապա-
տասխանեն Սուտ-Աթանասի խօսակցու-
թեան սկզբնաւորութեան և վերջաւորու-
թեան, PG 28, սիւն 1249-1265:

Ձեռ. 1913-ի մէջ հակաճառութիւնն կը
գտնուի թղ. 127ա-136ա:

Կը գտնուի սա նոյնպէս ձեռ. 1108-ի
մէջ (Սարգս. 265), թղ. 471ա-482ա բո-
լոր պարբերութիւնները, յունարէնի մէջ
ընծայուած զինքը ուղղափառ կոչողին,
կը գտնուին հայ ձեռագիրներու մէջ սուրբ
Բարսղի անունով(39) :

Թրգմ. Հ. ՔԵՐՈՒՅԷ ԶՐԱՔԵԱՆ

(Շարունակելի)

ԹԱԴԷՈՍ Վ. ԿՈՂՈՆԻԱՅԻ, ԹՈՒԱԹԵՅԻ ԵՒ ԹԱԴԷՈՍ ԵՐԷՑ

ՍԵՐԱՍՏԱՅԻ ՏԱՂԱՍՏՆԵՐ

Հանդէս Ամսօրեայ-ի 1953-ի թիւ 1-3-ի
մէջ (էջ 53-71) Հ. Ն. Վ. Ակինեան իմ
վերը փոխ առած խորագրով ունի շահե-
կան ուսումնասիրութիւն մը, ուր դար-
ձեալ պատմական գիտնական Հայրը կ'ը-
նէ իր սովորական քմածին նոյնացումները
համանուն ժամանակակից անձերու մա-
սին:

Քանի որ վերոյիշեալ երեք թաղէոսնե-
րուն մասին մենք ալ խօսած ենք հրատա-

րակուած կամ դեռ անտիպ զանազան աշ-
խատութեանց մէջ, բնական է որ նկատի
ունենանք յարգելի Հօր կարծիքները այս
երեքին մասին:

Նախ առնենք Թաղէոս Վ. Կողոնիա-
ցին:

Ծննդեան տարին, տեղն ու ծնողաց ա-
նունները անծանօթ կը մնան դեռ: Հ. Ա-
կինեան կը հետեւցնէ որ «ծնունդը կարելի
է դնել իբր 1500» (էջ 53): Նոյն միջոցաւ

կ'ուզէ որ ան Կողոնիա (Շապին-Գարահի-
սար) ծնած ըլլայ, «այս պատճառով ալ
կրած է իբրեւ մականուն Կողոնիացի»
(անդ): Թէեւ պէտք է յիշել որ անպատ-
ճառ ծնած տեղւոյն անուամբ չէ որ կը
յիշուին շատեր: Օրինակ՝ Յովհաննէս
Երզնկացի, որ Ծործորեցի կոչուեցաւ,
Ստեփաննոս Դ. Երզնկացի, որ Հոռմկա-
յեցի կոչուեցաւ, և ալն:

Թաղէոս Վ. Կողոնիացիի մասին ունինք
վկայութիւններ 1521ին (Երզնկա), 1534-
ին (Հալէպ և Երուսաղէմ), 1548ին կը
կարմէ Աւետարան մը հաւանաբար Եր-
զնկա:

1562ին Ղազար Գրիգ Երզնկա օրինակած
Մաշտոցի մէջ կը յիշէ «եւ զուսուցիչն իմ
գթադէոս րարունի վարդապետն, զի բա-
ղամ աշխատանս կրեաց ընդ իս և ևս
զում աշխատանս կրեաց ընդ իս և ևս
անմիտ ոչ կարացի դառնել լաւ»: Հ. Ա-
կինեան կ'եզրակացնէ որ 1562ին երբ Ղա-
զար կը գրէր իր Մաշտոցը և այս յիշա-
տակարանը, «ան (Թաղէոս) կենդանի էր»
(էջ 54): Սակայն Ղազարի վերոյիշեալ
յիշատակարանը բան մը չ'ըսեր Թաղէոսի
այդ առեմ կենդանի ըլլալուն մասին: Ին-
ծի ծանօթ ևն բաղմաթիւ երախտապարտ
աշակերտներ, որոնք իրենց ուսուցիչին
մահէն շատ տարիներ վերջ դեռ երախտա-
գիտութեամբ կը յիշեն անոր անունը:
Ուրեմն հարց է Թաղէոսի 1562ին դեռ ողջ
ըլլալը և կարօտ է որոշ ապացոյցի: Երբ
մինչեւ 1562 Թաղէոսի կեանքին երկա-
րումը խնդրոյ նիւթ ընենք, այն ատեն
անոր իբր թէ 1500ին ծնած ըլլալու Հ.
Ակինեանի ենթադրութիւնը ինքնին կը
չքանայ(1):

Թաղէոս Վ. Կողոնիացի ուսած է Մա-
ղաքի Վ. Դերջանցիի ներքեւ և անոր

(1) Հ. Ակինեան 1532ին կ'ուզէ որ Կողոնիացի
ստացած ըլլայ վարդապետական դասընթաց. մինչ
1521ին Յայրմաւորքի յիշատակարանը կը յիշէ
«Թարմատար և յոգնամեղ Թաթոս վարդապետ
կողոնեցոյ»:

նուիրած է «Անահիմ Ի Կողոնեցի Թաղէոս
վարդապետէ առ իմաստուն վարդապետն
իւր Մաղաքի Դերջանցի»: Ասիկա է
Թաղէոսի մեղի հասած միակ «գրական»
աշխատանքը: Իրմէ ուրիշ աշխատութիւն
չունինք: Նոյնիսկ կ'երեւայ թէ գրչու-
թեամբ չէ գրադած, այլ միայն մեղի տը-
ւած է երեք ձեռագիրներ կաղմեալ (առ
այժմ այսքան ծանօթ է): Ասոնցմէ առա-
ջինը Յայրմաւորք մըն է, Երզնկա կաղ-
մած: Երկրորդը Արարածոց գիրք մը, Հա-
լէպ գտնուած և Երրորդը Աւետարան մը,
1548ին վերակաղմուած, սակայն 1471ին
գրուած:

1562ին Ղազարի Մաշտոցին յիշատա-
կութենէն կը տեսնենք որ Թաղէոս ունե-
ցած է նաև աշակերտներ, որոնցմէ գոնէ
հատ մը՝ Ղազարը՝ ծանօթ է:

Ահա՛ ինչ որ գիտենք որոշ կերպով Թա-
ղէոս Կողոնիացիի մասին, որ միշտ ալ ո-
րոշ յիշած է իր Կողոնիացի ըլլալը:

* * *

Հիմա խօսինք Թաղէոս Թոխաթեցիի
մասին:

Իր մասին ոչ մէկ ծանօթութիւն ծնն-
դեան վայրի, ժամանակի, կրթութեան,
ծնողաց ևն.: Հ. Մ. Պոտուրեան «1550ի
ատենները ծնած. և կամ այն է՝ որ մը-
տերիմ ընկերն եղած է Ստեփանոս Թո-
խաթեցի Տաղասացին, և կամ ուսուցիչ-
ընդ»: Հ. Ակինեան իրաւացիօրէն գիտել
վու տայ որ «որ և է վկայութիւն» չի
ներկայացներ Հ. Պոտուրեան իր եզրակա-
ցութիւնը հաստատելու համար: Ըստ իս
1550ին ծնած ըլլալը լոկ ենթադրութիւն
մըն է:

Մեր ձեռագիրներուն մէջ կան շարք մը
տաղեր որոնք կը վերջանան «Թաթոսն ա-
սաց», «Թաթոս» և անգամ մըն ալ «Թո-
խաթցի Թաթոսն ասել է»: Իսկ ուրիշ տա-
ղի մը խորագիրն ալ է «Տաղ հոգւոյ ի
Թոխաթցի Մհտեցի Թաթոսէ». իսկ տաղը

կ'աւարտի «Թաթէոս առէ՛» ստորագրուած է: «Թոխաթցի Թաթոսն» ստորագրութեամբ տաղին օրինակներէն ոմանք ունին «... Թոխաթցի մղտեսի Թաթոսէն ասացեալ...»: Բոլոր այս տաղերը որոշ նմանութիւն մը ունին իրարու հետ լեզուի ու ոճի:

Այս տաղերէն միոյն խորագիրն ալ ունի «... ասացեալ ի Թաթէոս սարկաւազէ»: Այս պատճառաւ Հայրենիք Ամսագրի 1935, թիւ 11ի իմ աշխատութեան մէջ «... տաղասաց Թաթոս սարկաւազ Թոխաթեցի» նշանակած էի, քանի որ տաղապետ չունէի անոր սարկաւազը ըլլալուն մասին, ինչպէս իր տաղերէն ոմանք Երուսաղէմի նուիրուած ըլլալուն եւ իր մահտեսի կոչուած ըլլալուն համար՝ տարակոյս չունէի որ Երուսաղէմ գացած էր:

Հ. Ակինեան կ'երեւի թէ համաձայն չէ այս «սարկաւազ» յորջորջումի՝ ըսելով. «Որպէս թէ ան բոլոր տաղերը սարկաւազութեան տարիներուն երգած ըլլայ» (էջ 55): Դիտել տամ յարգելի Հօր որ եթէ սարկաւազէն աւելի բան մը եղած ըլլար Թաթոս Թոխաթցի տաղասացը՝ անտարակոյս իր տաղերուն վրայ պիտի յիշուէր, փոխանակ «սարկաւազ»ի համեստ կոչումին: Իր մահտեսի կոչումն ալ ցոյց կու տայ Թաթոսի համեստ ինքնութեան մասին: Սարկաւազի մը կարելի է ըսել մահտեսի. սակայն վարդապետի մը կամ աւելի բարձր եկեղեցականի մը այդ կոչումը չէր տրուեր:

Ուրեմն ինչ որ գիտենք Թաթոս տաղասացի մասին սա է որ անունը Թաթէոս է, սարկաւազ է, կը կոչուի Թոխաթցի, այցելած է Երուսաղէմ եւ կը կոչուի մահտեսի (մղտեսի, մղտեցի):

Հ. Ակինեան ահա այս պարզ ու սովորական անունը առնելով՝ կը խորհի որ այս երկու Թաթէոսները նոյնն են: «Պարզ գուգադիպութեան արդիւնք պէտք է համարիլ, կը գրէ ան, որ Կողոնիացի եւ Թո-

խաթեցի Թաթէոսները թէ՛ վարդապետ են, թէ՛ տաղասաց եւ թէ՛ Երուսաղէմի այցելու: Թոխաթեցի վարդապետը բացի տաղերէ որ եւ է հետք ձգած չէ պատմութեան մէջ, եւ ոչ ալ ԺԶ. դարու յիշատակները խօսք են ըրած իր մասին» (էջ 54):

Նոյն Կողոնիացին «տաղասաց» չէ: Մէկ Անճիմիով մը դայն տաղասաց չենք կրնար կոչել: Յետոյ Թաթոս Թոխաթեցին «վարդապետ» չէ՛ կոչուած իր տաղերուն մէջ: Ատոր համար է որ «բացի տաղերէ, որ եւ է հետք ձգած չէ պատմութեան մէջ եւ ոչ ալ ԺԶ. դարու յիշատակները խօսք են ըրած իր մասին»: Վարդապետներ այս կամ այն պատճառաւ կրնան յիշուիլ, սակայն Տաղասացներու մասին ընդհանրապէս բան չի գրուիր նախնեաց մօտ: Ուրեմն Թաթոս տաղասացի մասին եղած լրուութիւնը կրնայ ըմբռնուիլ:

Հ. Ակինեան այսպէս պարզապէս Կողոնիացիի եւ Թոխաթեցիի անունն նմանութեան տարեալ՝ կը գրէ. «Կը միտիմ նոյնացնել երկու Թաթէոսները այն մտածութեամբ՝ թէ ան Կողոնիացի մականուանած է ինքզինքը ծննդեան քաղաքին անունով, իսկ ուրիշներ կոչած են զինքը Թոխաթեցի, Թոխաթ գործած ըլլալուն համար, յամենայն դէպս 1534էն ետքը» (էջ 55): Ահա այսքան խախտու հիմերու վրայ կ'ուզէ հաստատել Հ. Ակինեան այս իր նոյնացումը:

Նախ ըսենք որ Կողոնիացի ըստ երեւոյթի իր վկայութեանց՝ Երզնկա դաստիարակուած ու վարդապետացած է: Երզնկա էր 1521ին, եւ մինչեւ 1534էն առաջ առնէ մը՝ երբ Հալէպ եւ Երուսաղէմ դնաց: Վերջապէս մինչեւ 1548 դեռ ինքզինքը Կողոնիացի կը կոչէ խիստ որոշ կերպով: Արդե՞ր է որ ան կրնար Թոխաթ գացած եւ այդ տեղոյն անունով ճանչցուած ըլլալ: Անտարակոյս որպէսզի Կողոնիացին Թոխաթցի կոչուի՝ երկար ժամանակ մը Թո-

խաթ ապրած ըլլալու է, բան մը որ չի համապատասխաներ Կողոնիացիի մասին մեր գիտցածին: Յետոյ եթէ ընդունինք Հ. Ակինեանի ենթադրութիւնը՝ որ Կողոնիացի 1534էն ետքը Թոխաթ գացած է, դարձանալի է որ հոն երթալէն 14 տարի վերջ, 1548ին դեռ Կողոնիացի կը գրէ ու կը ստորագրէ: Վերջապէս Կողոնիացի իր միակ յանդաւոր գործին մէջ Կողոնիացի կը ստորագրէ:

Հ. Ակինեան Թաթոս Թոխաթեցիի տաղերուն վրայ կ'աւելցնէ ուրիշ տաղերու շարք մը եւս, եւ ամէնքը մէկ կ'ուզէ իր ստեղծած Կողոնիացի-Թոխաթցիի վերադրել: Հոս ալ սակայն վճռական փաստ մը չունենալէ դատ, նոյնիսկ կասկած ունի: «Թաթէոս ունի թէ՛ դրաբար եւ թէ՛ ուսուցիչի հայերէնով տաղեր եւ դանձեր: Թէ՛ դրաբար հայերէնով երգերէն մին կամ միւսը հնագոյն Թաթէոսի՞ մը վերադրելու է, չեմ կարող վճռել» (էջ 55):

Սակայն իր ներկայացուցած տաղերը կաղմութեամբ, լեզուով, ոճով համահասար չեն: Որ եւ է տարակոյս չկայ թէ, ինչպէս յարգելի Հայրն ալ կ'ըսէ, «Թամկախառն լեզուով գրուած տաղերը թէ՛ ըստ բովանդակութեան եւ թէ՛ ըստ ոճի մէկ տաղասաց կ'ենթադրեն» (էջ 55): Ինծի կը մնայ աւելցնել որ այս մէկ գրէ՛ ելած Թամկախառն տաղերը ստորագրուած են միշտ «Թաթոսն ասաց», «Թոխաթցի Թաթոսն ասել է», «Թաթէոս առէ՛», «Թաթոսն լայ» եւն., որոնց մասին քիչ վերջ հատիկ հատիկ պիտի խօսիմ, բոլորն ալ Մահտեսի Թաթոս Սարկաւազ Թոխաթեցի տաղասացին գործերն են. իսկ մնացեալները չեն պատկանիր իրեն:

Այս Թաթոս սարկաւազ Թոխաթցիի կենաց ժամանակը կը մնայ անձանթ, եթէ Հ. Պոտուրեանի կարծիքը՝ անոր «1550ի առնները ծնած» ըլլալու՝ ժխտենք: Ամէն պարագայի տակ Ս. Ղազարի մէկ տաղարանը (ԺԶ) գրուած է 1563ին, իսկ Թա-

թոսի տաղերուն մասը 1604ին. եւ դժուար թէ 1550ին ծնած մէկու մը տաղը ըլլայ 1604ին օրինակուած: Նոյնիսկ նկատի առնելով հաւանականութիւնները մեր ձեռագրաց մէջ արտագրութեանց, գուցէ հարկ ըլլայ Թաթոս սարկաւազ Թոխաթեցին նոյնիսկ ԺԵ դարու տաղասաց նկատել:

Նկատելի է Թաթոս սարկաւազ Թոխաթցիի տաղերուն մէջ՝ որ Երուսաղէմ ու սրբազան վայրերը՝ Սաղէմի շուրջ՝ խոշոր ներշնչարան մը եղած են իրեն գրելու համար իր տաղերը առ հասարակ: Ինծի ծանօթ է Թաթէոս սարկաւազ մը, յետոյ երէց, որ գրչութեամբ զբաղած է Երուսաղէմի շուրջ: 1449ին Գանձ դիրք մը կը գրէ ի Ս. Փրկիչ, Երուսաղէմ, եւ 1455ին ալ Աւետարան մը Սաղէմի Սափայի վանքին մէջ: Կ'երեւայ որ ուսումնական մէկն էր եւ ունէր աշակերտ, որ կը յիշուի 1455ին յիշատակարանին մէջ, իբրեւ Տէր Աբրահամ քահանայ: Իր երկու գրչութեանց թուղթին կոկիղը եղած է իր հոգեւոր եղբայրը՝ Յովհաննէս:

Հոս նկատի առնենք նաեւ Հ. Ակինեանի ներկայացուցած տաղաշարքը:

- 1) Անճիմի ի Կողոնեցի Թաթէոս վարդապետէ առ իմաստուն վարդապետն իւր Մաղափա Դերջանեցին: - Այս տաղը, ինչպէս խորագիրն ալ ցոյց կու տայ, որոշ կերպով կը պատկանի Կողոնիացիի: Չայն մենք ալ պիտի հրատարակէինք արդէն մեր Եկեղեցաց գաւառի պատմութեան մէջ, ուր ըսելիք ունինք իր մասին:
- 2) Թաթոսի ասացեալ, - տաղը որ կը սկսի «Աստուած անեղ եւ աննման» եւ որ կը վերջանայ Թաթոսն ասաց եւ այլն ստորագրութեամբ: Որոշ կերպով Թաթոս սարկաւազ Թոխաթցիի տաղ կը նկատեմ:

* * *

Հուսկ Թադէոս Սեբաստացի Տաղասաց :
Հայաստանեայց Եկեղեցիի (Նիւ Եորք)
Սեպտեմբեր 1943, էջ 410-413 եւ 1944 Փե-
տրոբուար, էջ 186-188 (եւ ոչ թէ 1942,
էջ 410. 1943, էջ 186-7, ինչպէս որ սխալ-
մամբ կը գրէ Հ. Ակինեան, անդ էջ 67),
խօսած էի Թադէոս վարդապետ Սեբաս-
տացիի մասին, խորագրին մէջ իսկ հար-
ցական դնելով Սեբաստացւոյն անունէն
վերջ: Ասկէ զատ Հ. Ակինեանէ տարիներ
առաջ՝ իմ վերոյիշեալ գրութեանս մէջ ո-
րոշ կը գրէի. «Ուրեմն որոշ է որ Ղըլլա-
պաչի մեր հոս ներկայացուցած տաղը սը-
խալ է Թադէոս Սեբաստացիի վերագրել,
նոյնքան սխալ է նաեւ գայն վարդապետ
Էմբադրել» (ընդգծումները այն ատեն իսկ
ըրած եմ: Տես Հայ Եկեղեցի, 1944, էջ
186, Բ. սիւն): Վերջապէս այդ գրութիւնս
կ'աւարտէի ըսելով. «Թադէոս Սեբաստա-
ցի վարդապետ տաղասացի մը գոյութեան
մասին ալ արդէն տարակոյս յայտնեցի»
(էջ 187բ):

Լոկ Հ. Զամչեան է որ Թադէոս վար-
դապետ Սեբաստացի մը կը յիշէ իբր տաղ-
ասաց, որուն կը վերագրէ երկու տաղ.
«Ողբ ի վերայ մանկանց որ զերի տարան
ի քաղաքն Ստամպուլ» 1531էն, եւ «Տաղ
վասն շարժման Կարմիր դիւնոյն» (այլուր
«Տաղ ի վերայ Ղըլլապաչին որ Հայոց զաչ-
խարհս աւերեց») 1551էն: Այս երկու տա-
ղերն ալ զանազան օրինակներով ծանօթ
երբեք հեղինակ մը չեն յիշեր եւ անանուն
են: Խնդիր է թէ Հ. Զամչեան զո՞հ չէ՞ Ե-
ղած չիտթութեան մը, եւ սխալմամբ Թա-
դէոս վարդապետ Սեբաստացի մը անուա-
նած: Նման վարդապետ մը՝ ինչպէս որ
Հ. Ակինեան ալ գիտել կու տայ՝ ցարդ
անծանօթ է մեզի այդ չըջանին: Անոր վե-
րագրուած երկրորդ տաղը բացարձակա-
պէս իբր չըլլալը որոշ է, ինչպէս նաեւ ա-
ռաջին տաղին իրմէ չըլլալը կարելի է են-

թաղրել՝ քանի որ իրեն վերագրող խո-
րագիր մը կը պահար: Վերջապէս տարա-
կուսելի է Թադէոս վարդապետ Սեբաս-
տացիի մը գոյութիւնը, որ չիտթութեամբ
ծաղում կը ստանայ Հ. Զամչեանէ, որուն
կը հետեւին Հ. Ալիշան, Հ. Սոմալեան,
Հ. Աղեքսանդրեան, Տրդատ Եպ. Պալեան:

Հ. Ակինեան, որ անտես թողուցած է
տարիներ առաջ մեր բրած ճշդումը, Թա-
թէոս կամ Թաթոս երէցի մը երկու տա-
ղերը կը գտնէ Բերլինի թիւ 100 ձեռագրին
մէջ: Ան կը խորհի նոյնացնել այս անտէր
Թաթոս երէցը՝ Յովասափ Սեբաստացիի
հօր՝ տէր Թաթէոսին հետ: Նման նոյնաց-
ման մը պատճառ չկայ: Յովասափ Սե-
բաստացի կը խօսի Թաթէոս քահանայի մը
մասին, որուն համար Հ. Ակինեան կ'ըսէ.
«որ ոչ այլ ոք է, բայց եթէ իր տէր հայ-
ըր» (էջ 68): Պահ մը ընդունինք յարգելի
Հօր կարծիքը, սակայն Յովասափ բան մը
չ'ըսեր այս տէր Թաթէոսին տաղասաց ըլ-
լալուն համար, այլ կ'ըսէ «արուեստիւ գը-
րագիր. զոր բաղում գիրքս աստուածա-
յինս գրեաց (ընդօրինակեց) աշխատու-
թեամբ» (էջ 69):

Նախ Յովասափ չ'ըսեր որ այս Թաթէոս
քահանան իր հայրն էր, երկրորդ՝ չ'ըսեր
որ տաղասաց էր նոյն քահանան: Համա-
ձայնինք որ Յովասափի հայրը ըլլայ. սա-
կայն տաղասաց ըլլալուն մասին դժուար
թէ կարելի ըլլայ տեղի տալ:

Յովասափի հայրը՝ Թադէոս երէց, Ե-
ղած է գրիչ մը որմէ Հ. Ակինեան կը յիշէ
1507 թիւէն Մաշտոց մը, գրեալ ի Սեբաս-
տիա. 1517էն գարձեալ Մաշտոց մը, նոյն-
պէս անդ. 1528էն Ոսկի-Փորիկ մը, դար-
ձեալ անդ: Իսկ եթէ Յովասափի յիշած
Թադէոս քահանան նոյն է իր հօր հետ,
այն ատեն ան մեռած է 1542ին:

Ամէն պարագայի տակ՝ Թադէոս քա-
հանայ ու եւ է կապ մը չունի Թադէոս վար-
դապետ Սեբաստացիի հետ, չի նպատու-
անոր գոյութեան. Ղըլլապաչի տաղը 1551ին

գրուած՝ չի կրնար հեղինակութիւնը եղած
ըլլալ Թադէոս երէցի, որ մեռաւ ըստ Յո-
վասափի՝ 1542ին:

* * *

Աւարտելէ առաջ ճշդում մը եւս:

Թադէոս վարդապետ Կողոնիացի աշա-
կերտած է Մաղաքիա վարդապետ Դեր-
ջանցիի:

Սակայն Մաղաքիայի աշակերտներուն
մէջ կար նաեւ երկրորդ Թադէոս մըն ալ,
զոր Մաղաքիա 1530էն քիչ վերջ գրած Եր-
զնկայի Աւագ վանքի աշակերտներուն յի-
շատակութեան մէջ կը յիշէ իբր Տէր Թա-
դէոս, որ անտարակոյս քահանայ մը ըլ-
լէր, որ անտարակոյս քահանայ մը ըլ-
լալուն էր իր Տէր տիտղոսէն գատելով: Այս
Տէր Թադէոսը կը յիշուի 1534ին Երզնկայի
Կայիփոսի վանքը գրուած յիշատակարանի
մը մէջ:

Այլ եւ վարպետ մեր արի,

Տէր Թադէոս անուն բարի:

Ասիկա անտարակոյս Թադէոս վարդա-
պետ Կողոնիացին չէ, որ 1534ին՝ ինչպէս
տեսանք՝ Հալէպ ու Երուսաղէմ կը գրա-
նուէր:

Կը խորհիմ որ Տէր Թադէոսը պէտք է
նոյնացնել 1503ին յիշուած Աւետարանի
մը նորոգող Թադէոս վարդապետ Երզն-
կացւոյն հետ:

* * *

Հ. Ակինեան անտէր մնացած եւ Հ.
Զամչեանէ «Թադէոս վ. Սեբաստացի»ի

մը վերագրուած երկու պատմական տա-
ղերուն մասին վերջապէս կ'աւելցնէ.
«հարկ է դալն նոյնացնել Թադէոս վ. Կո-
ղոնիացւոյ - Թոխաթեցւոյ հետ: Երկու
տաղերն ալ նկատի ունին քաղաքական
անցուղարձեր. անոնց նկարագրութիւնը
աղբյուրին տեսակէտով կարող էր նկատ-
ուիլ զանգատ՝ տիրող պետութեան դէմ,
եւ այսպէս վտանգի ենթարկել ողբերգո-
ղը: Այս պատճառով պիտի զուշանար
հեղինակը իր անունը ստորագրել այդ
տաղերուն տակ իր կենդանութեան: Իր
մահէն ետքը երկրորդ մը կարող էր սխա-
լիլ Հեղինակի մականունի մասին» եւն. (էջ
71): Տաղերուն մէջ Հեղինակին անուն
չ'գոյութեան մասին Հ. Ակինեանի այս բա-
ցատրութիւնը բոնադրօսիկ է, քանի որ
չատ աւելի ուժեղ տաղեր «տիրող պետու-
թեան դէմ» այդ օրերուն գրուած՝ մեզի
հասած են, հեղինակին անունը որոշ տա-
ղին մէջ ընդելուզուած: Եթէ Կողոնիացին
սխալմամբ Սեբաստացի կոչուած է, ատի-
կա անտարակոյս պատահած է Հ. Զամ-
չեանի կամ անոր աղբիւրին չիտթութե-
նէն: Սակայն 1531էն եւ 1551էն եղող այս
երկու պատմական տաղերը նմանութեան
ձգր մը չունին՝ լեզուով՝ Կողոնիացիի մե-
զի ծանօթ միակ տաղ Անճիւնէին հետ:

Իսկ Ղըլլապաչի տաղը ինծի ծանօթ երկու
օրինակներուն մէջ (Հայապատում եւ Զըմ-
մաուի թիւ 124 նօտրդիր) վերջաւորութե-
նէն պակաս կ'երեւի, եթէ չեմ սխալիր:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

